ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

1.*Պատմական ո՞ր իրադարձության ժամանակ զոհված մարտիկները և նրանց առաջնորդը դասվեցին Հայ Առաքելական եկեղեցու սրբերի շարքը:*
Գրականության մեջ նշի՛ր առնվազն 1 գրողի ստեղծագործություն՝ նվիրված նրանց:
Քանդակագործության մեջ ո՞վ է ստեղծել այդ հրամանատարի մոնումենտալ կերպարը և որտե՞ղ է այն գտնվում:
Գեղանկարչության մեջ ո՞վ է այդ թեմայով կտավի հեղինակը /առնվ. 1/:

(3)

<u>Պատասխան-</u>*Ավարայրի ճակատամարտի ժամանակ նահատակված զինվորները և նրանց հրամանատարը՝ Վարդան Մամիկոնյանը, դասվեցին մեր եկեղեցու Սրբերի շարքը: Դ. Դեմիրճյանը գրել է <<Վարդանանք>> պատմավեպը, Երվանդ Քոչարը քանդակել է Վ. Մամիկոնյանի արձանը, այն գտնվում է Երևանում, Գրիգոր Խանջյանը կերտել է <<Վարդանանք>> մեծածավալ աշխատանքը:*

2.**«Թեֆարի՞կ, ուսկի՞ց գտավ թեֆարիկը»…**

Ի՞նչ է «թեֆարիկը», ինչպե՞ս այն դարձավ հերոսուհու ճակատագիրը որոշողը:

(1,5)

<u>Պատասխան</u> - *«օծանելիք»*
Միրած երիտասարդին հաճոյանալու համար օգտագործված օծանելիքը տհաճ վերաբերմունքի է արժանանում: Ողջ գիշեր ամեն կերպ մարմինը այդ բույրից մաքրելու արդյունքում հերոսուհին թոքախտով հիվանդանում է, ապա՝ մահանում:

3.**Մ. Մեծատուրյան, Միրանույշ Պերպերյան, Մ. Կ. Մ., Շավասպ Ծիածան, Հրաչյա, Սուրեն Համազասպ** – *հայ գրողներից ո՞վ էր մամուլում հանդես գալիս այս գրական կեղծանուններով:*

(1)

<u>Պատասխան</u> – *Միսաք Մեծարենց*

4.*Ինչպես գիտենք, Հայաստանում հելլենական մշակույթի տարածումից հետո հունական և հայկական դիցարանների աստվածները համադրվել են. Արամազդը նույնացվել է Զևսին, Անահիտը՝…, Միհրը՝…, Վահագնը՝ …., Աստղիկը՝ ….:*

Հայկական ո՞ր առասպելներն են պարունակում դիցաբանական տարրեր: Թվի՛ր առնվազն երեքը:

(3)

<u>Պատասխան</u> - *Անահիտը՝ Արտեմիսին, Միհրը՝ Հեփեստոսին, Վահագնը՝Հերակլեսին (նաև Ապոլոնին), Աստղիկը՝Աֆրոդիտեին:*

Դիցաբանական տարրեր են պարունակում «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Արտավազդ» հայկական առասպելները, «Սասնա ծռեր» էպոսը և այլ բանահյուսական պատումներ:

5.Այստեղ միշտ քեֆ ու հանդես է.
Կեցցե՜ <<մեր…….>>:
Ա՜խ, շեն է տունն այս, շե՜ն է,
Բայց ափսոս չըկա Աշխենը:

Անպակաս այս տան վարդը-
Ծաղկի՜ մեր քնքուշ Նվարդը:
Այս տունը միշտ անուշ է.
Այստեղ է անուշ Անուշը:

Եվ ինչպես մարդիկ չարբեն,
Քանի այստեղ է Արփին…

Լրացրու առաջին տան բաց թողած բառը: Ի՞նչ հնարք է գործածել Տերյանը իր այս բանաստեղծության մեջ: Ովքե՞ր են նշված կանայք:

(2)

<u>Պատասխան-</u> *Տերյանը գրել է <<Օհաննես>>: Պատասխանը ճիշտ կհամարվի նաև՝ Հովհաննես , Հովհաննես Թումանյան, Թումանյան տարբերակների դեպքում: Տերյանը կիրառել է բաղաձայնույթի /ալիտերացիա/, ինչպես նաև բառախաղի հնարքը: Նշված կանայք Հովհ. Թումանյանի դուստրերն են:*

6.Ինչո՞ւ Վարուժանը հայացքը սևեռեց հեթանոս անցյալին:

(1,5)

<u>Պատասխան-</u> *Ներկա ծանր իրականության և փառավոր անցյալի խիստ հակադրության փաստն էր պատճառը, որ Վարուժանը և ժամանակի այլ գրողներ /Սիամանթո, Չարենց, Թեքեյան, Շանթ.../ դիմեցին հեթանոս անցյալին՝ ներկային և ապագային ուժի ու գեղեցկության պաշտամունքի դիրքերից նայելու համար: Ընդհանրապես 20-րդ դարի սկզբում գրականության մեջ միտում կար նորդասականապաշտության ուղղության հիմնադրմանը, որն ըստ Վարուժանի՝ «անցյալապաշտության» հաղթանակն էր «ապագայապաշտության» նկատմամբ:*

7.Նշված խնդիրներից ո՞րը գեղարվեստորեն չի կերպավորվել Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքում.

ա/կյանքի բանաստեղծական ընկալում

բ/կյանքի հոգսերի մեջ կորած և շրջապատի կողմից անտեսված գեղեցկություն

գ/մթնաձորյան բնորոշ իրականություն

դ/կորսված հայրենիքի ողբերգություն

(1)

<u>Պատասխան-</u> *դ/կորսված հայրենիքի ողբերգություն*

8. **-Ես եմ լավը և քեզանից էլ բարձր:**

-Ես քեզանից և՛ լավն եմ, և՛ ավելի մեծ ու բարձր:

Երկու քույրերի վեճը փորձում է հարթել երրորդ կողմը, բայց՝ ապարդյուն, որից հետո անիծում է նրանց, որ իրարից հեռանան և երբեք չհանդիպեն:

Ո՞ր լեռների միջև է երկխոսությունը, ո՞րն է այս ավանդության մեջ 3-րդ կողմը, ինչպե՞ս է լուծվում այս վեճը:

(3)

<u>Պատասխան-</u> *Երկու քրոջ՝ Արագածի ու Մասիսի վեճն է: Մարութա լեռը փորձում է հաշտեցնել, բայց ապարդյուն: Անիծում է, որ նրանք իրարից հեռանան և երբեք չհանդիպեն: Քույրերից մեկը մյուսին անիծում է, որ*

արցունքները չպակասեն աչքերից, իսկ մյուսը, որ մարդիկ նրա կատարը չբարձրանան և մատաղ չանեն: Այդպես էլ լինում է:

9. **Մարթա, Թորոս, Սաքուլ, Նատո, Ասատուր, Յազոր, Անան, Հռոմսիմ, նախշքար Դավիթ, Մայի, Արտեմ, Մայան….**

Ի՞նչ <<հասցե>> է միավորում այս հերոսներին: Ո՞վ է հեղինակը:

(1,5)

<u>Պատասխան-</u>*«Հասցեն» Նար-Դոսի «Մեր թաղն» է:*

10. Քո գարունները կբացվեն նորից,
Քո լավ օրերը ետ կգան նորից,
Ձմռանից հետո, դժոխքից հետո,
Կվերընձյուղվի կենաց ծառը քո –
Քեզ համար, Հայաստան:
Գալիք օրերդ նորից կերգեն,
Ձավակներդ ամուր տուն կկառուցեն,
Սարսափից հետո ու վախից հետո,
Աստված կբուժի լլկված հողը քո –
Քեզ համար, Հայաստան:
Ամբողջ աշխարհը ոտքի է ելել,
Ամբողջ աշխարհը քեզ հետ է հիմա,
Եվ քեզ համար է, մոռացված իմ ազգ,
Արար աշխարհը իր սիրտը բացել,
Ու քեզ է մեկնել ձեռքերը ահա:

Հատվածը Շառլ Ազնավուրի <<Քեզ համար, Հայաստան>> բանաստեղծությունից է:

Ստեղծման ի՞նչ հիմք ունի այս բանաստեղծությունը:

(2,5)

<u>Պատասխան</u> *-Այս բանաստեղծությունը, որ երգի վերածվեց և կատարվեց էստրադայի համաշխարհային աստղերի կողմից, գրվել է 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի տպավորություններից:*